

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակվել է ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի և արտացոլում է «Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով¹ (այսուհետ՝ Եռամյա ծրագիր) սահմանված պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղությունների իրագործման կատարողականը:

Եռամյա ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները մշակվել և իրականացվել են հաշվի առնելով երկրի ցուցանիշների՝ միջազգային վիճակագրական չափանիշների հետ համադրելիությունը, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով՝ ցուցանիշների հնարավոր կայուն պարբերականությունը, ինչպես նաև պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով նախատեսված միջոցառումների (աշխատանքների) իրագործման ենթատեքստով՝ պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների (ֆինանսավորման) հետ համաչափությունը:

Եռամյա Ծրագրով սահմանված ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումների ենթատեքստով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից յուրաքանչյուր տարի հաստատվել են նաև պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերը², որոնք համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ներառել են հետևյալ պարտադիր բաղադրիչները. վիճակագրական աշխատանքների ցանկը, դրանց կատարման ժամկետները, ընդգրկման դաշտը, դիտարկումների ձևերը, վիճակագրական ցուցանիշների տրամադրման պարբերականությունը, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից իրականացման ենթակա հետազոտությունների, հրատարակվելիք վիճակագրական ժողովածուների, տեղեկագրերի և այլ հրապարակումների ցանկն ու պարբերականությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և այլ վարչական ռեգիստրների ու դրանց կողմից ներկայացվող ամփոփ վիճակագրական տեղեկությունների (տվյալների) ցանկը, վիճակագրական տեղեկատվության սպառողների ցանկը, թղթային կրիչներով տրամադրվող տեղեկատվության կազմը և տրամադրման կարգը:

¹ Ընդունված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ 2009թ. նոյեմբերի 17-ին: Հրապարակված է Պաշտոնական տեղեկագիր թիվ 64 (730), 16.12.2009թ.

² Պետական վիճակագրական աշխատանքների 2010, 2011, 2012 թվականների տարեկան ծրագրերը հաստատվել են Խորհրդի, համապատասխանաբար 2009թ. դեկտեմբերի 23-ի թիվ 45-Ն (հրապարակվել է Հայաստանի Հանրապետության Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 2 (354)¹, 27.01.2010թ.), 2010թ. դեկտեմբերի 21-ի թիվ 53-Ն (հրապարակվել է Հայաստանի Հանրապետության Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 4 (387)¹, 21.02.2011թ.), 2011թ. դեկտեմբերի 14-ի թիվ 10-Ն որոշումներով (հրապարակվել է Հայաստանի Հանրապետության Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր թիվ 3 (416)¹, 01.02.2012թ.):

Ըստ այդմ, հիմք ընդունելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված աշխատանքները (միջոցառումները), հաշվետու ժամանակահատվածում նախատեսված և իրականացման ենթակա աշխատանքների ընդհանուր ծավալը (հաշվի առած պարբերականությունը) կազմել է 5710 միավոր (այդ թվում ըստ տարիների՝ համապատասխանաբար 1895, 1905 և 1910), որոնք բոլորն էլ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրերով սահմանված ժամկետներում և պարբերականությամբ³:

³ Հիմք՝ վերը հիշատակված տարեկան ծրագրերի կատարման հրապարակված հաշվետվությունները («2010թ. պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի» կատարման հաշվետվությունը՝ հաստատված Խորհրդի 2011թ. փետրվարի 28-ի թիվ 04-Ա որոշմամբ, Երևան-2011, «2011թ. պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի» կատարման հաշվետվությունը՝ հաստատված Խորհրդի 2012թ. մարտի 5-ի թիվ 08-Ա որոշմամբ, Երևան-2012, «2012թ. պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի» կատարման հաշվետվությունը՝ հաստատված Խորհրդի 2013թ. մարտի 7-ի թիվ 04-Ա որոշմամբ, Երևան-2013):